ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նարինե Խաչատուրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Կոկանդ (Ուզբեկստան)
2019 թվականի սեպտեմբերի 12-14-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Կոկանդի ժողովրդա-կիրառական արվեստի միջազգային փառատոն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Կոկանդի Ժողովրդակիրառական արվեստի առաջին միջազգային փառատոնին

Ս. թ. սեպտեմբերի 12-14-ը Ուզբեկստանի մշակույթի նախարարության հրավերով մեկնել եմ Տաշքենդ և Կոկանդ քաղաքներ: Տաշքենդում հանդիպումներ եմ ունեցել Ուզբեկստանի, Ղազախստանի, Տաջիկստանի և Բելոռուսի մշակույթի պատասխանատուների հետ, քննարկել եմ փոխհամագործակցության հարցեր: Կոկանդում սեպտեմբերի 14-ին ներկա եմ գտնվել երկրի նախագահի կողմից կազմակերպված մեծ ընդունելությանը և կիրառական-դեկորատիվ արհեստների միջազգային առաջին փառատոնի բացման պաշտոնական արարողությանը, որի

ընթացքում ներս է բերվել նաև Հայաստանի Հանրապետության դրոշը: Փառատոնին Հայաստանը ներկայացված է եղել մեկ տաղավարով՝ մեկ վարպետ-արծաթագործով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Տեղի են ունեցել համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ անհատական քննարկումներ

- Ղազախստանի հանրապետության մշակույթի նախարար Ա. Ռահիմկուլովայի հետ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել 2020թ. Ալ. Սպենդիրայանի 150 /Հայաստանում/ և Ալ Ֆարաբիի /Ղազախստան/ 1150-ամյակներին նվիրված գիտաժողովներին փոխադարձ մասնակցության ապահովման հարցում:

- Ուզբեկստանի մշակույթի պատասխանատուների հետ քննարկվել է 2021թ. Երկրորդ միջազգային փառատոնին Հայաստանի ավելի ակտիվ մասնակցության հարցը:

2. Այցելել եմ մի շարք թանգարաններ: Տաշքենդի Ժողովրդական արհեստների թանգարանում որոշ տեղեկություն փոխանցել հայկական գորգերի մասին, Թամերլանի թանգարանում ներկայացրել Շահ Ջահանի կնոջ՝ Մումթազ Մահալիի, ըստ լեգենդի, հայկական ծագման մասին:

18.09.2019

Նարինե Խաչատուրյան